հանդարտութեամբ կը խօսէին, կը խորհրդածէին հասարակաց գործոց վրայ։ Ճեմելեաց մէկ ծայրը բարձրացած էր Կամենիցի անմատչելի բերդին պատը. մութը երթալով կը թանձրանար հորիզոնին վրայ. կակղիք քաղցրահոտ բուրմունք կը տարածէին օդոյն մէջ, և նոցա տերևոց խշիւնն, իբրև մըրմունջք երեկոյեան աղօթից կը լսուէր։ Բուտագովիչ պատմելով չեր կշտանար Հայոց Ս. Նիկոլայոս եկեղեցւոյն փառաւորութիւնը, վայելչութիւնը, նորա ընդարձակ շրջապատ սրահը, և սիւնազարդ մուտքը. կը գովէր Հայոց ճարտարարուեստ և հոյակապ դատարանը, հաստաբետ կաղնի մարդակներով. որոց վրայ հայերէն տառերով փորագրուած էր ԺԴ դարու լինելնին։ Փոքրիկ Մարգարիտա այդ հրաշալիքը լսելով, լուիկ մնջիկ նստած՝ երեսները կը կարմրէին, աչքերը կը փայլէին. իսկ Ակոբսոյ մտադրութեամբ մտիկ անելով, կը փափաքէր օր մի առաջ երթալ տեսնալ այդ առասպելախառն և գեղեցիկ քաղաքը։ Ուստի օր մի՝ երբ իմացաւ նա՝ որ Իլվով եկած Ս. Երրորդութեան կարգի միանձունք պիտի երթան 'ի Կամենից՝ Հայ, Ռուս, և Լեհացի գերեալներ յայլազգեաց գնելու և ազատելու համար, մեծ ուրախութիւն զգաց, և հաստատապէս միտքը դրաւ՝ որ անպատճառ ինքն ևս միանձանց ընկերանայ, գերեաց գերեհան լինելու։

Գերեհանաց ընկերութեան երկու անդամք հայ էին, մին դեռ նորընծայ կրօնաւոր, որ արևելեան դեց բարբառով կը խօսէր, աշխարհական Զաքարիա Միքայէլիչ, որ Կամենիցի առման միջոց փոխադրուած էր Իլվով. սոցա գլխաւոր ընկերն էր di Sancta Maria Միքայէլ վարդապետ Սպանիացի։